
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ
ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱՆՈՐՄԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Բարախանյան Արման

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

քրեական իրավունքի ամբիոնի դասախոս,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական

պալատի դատավորի օգնական

DOI: 10.63925/18294847-2025.19օր-01

Համառոտագիր: Սույն հոդվածում քննարկման առարկա է դարձվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումների ամրագրման որոշ հիմնահարցեր: Հետազոտության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում առկա է քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, իսկ մյուսներում այդպիսի իրավակարգավորումների բացակայությունը որևէ կերպ չի խոչընդոտում քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելուն՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան որոշ երկրների փորձը:

Բանալի բառեր: քրեական ենթամշակույթ, գողական աշխարհ, օրենքով գող, գողական աշխարհի ներկայացուցիչներ, քրեական օրենսգրքի Ընդհանուր մաս:

1. Ներածություն

Քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական արդյունավետ և համալիր պայքար մղելու հանգամանքով պայմանավորված՝ կարևոր ենք համարում անդրադառնալ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Հայաստանի

Հանրապետության քրեական օրենսգրքի¹ (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) Ընդհանուր մասում առկա ինստիտուտներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հարցին:

Գործող Օրենսգրքի ընդհանուր մասում առկա՝ քրեական ենթամշակույթին առնչվող միակ կարգավորումը նախատեսված է 85-րդ հոդվածում (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը), որում, որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք, օրենսդիրը դիտարկում է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Նույնանման կարգավորում առկա էր նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի² (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգիրք) 76-րդ հոդվածում:

Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով³ փոփոխություններ և լրացումներ կատարվեցին միայն նախկին Օրենսգրքի հատուկ մասում և, ի թիվս այլնի, նախատեսվեցին քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու, կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու հանցակազմերը⁴: Նույնիսկ, այդ օրենքի նախագծի

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, միասնական կայք, 2021.05.17-2021.05.30, պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունվել է 2020 թվականի հունվարի 22-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարի 22-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2020.02.21/13(1568) Հոդ.167:

⁴ Հարկ է նշել, որ նախկին Օրենսգրքով նախատեսված, վերը թվարկված հանցակազմերը որոշակի փոփոխություններով տեղ են գտել նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներում:

հիմնավորման մեջ⁵ չկար որևէ անդրադարձ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից նախկին Օրենսգրքի ընդհանուր մասի ինստիտուտներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է քննարկել գործող Օրենսգրքի ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան երկրների փորձը:

Հիմնական հետազոտություն

Գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց:

Նախկին Օրենսգրքով ոչ թե նշվում էր «ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում» արտահայտությունը, այլ ներկայացված էր հանցավոր արարքների սահմանափակ շրջանակ, որոնց պարագայում ՀՀ քրեական օրենսդրությունը կիրառելի էր՝ անկախ այդ արարքների փաստացի կատարման պետությունում դրանք քրեականացված լինելուց, օրինակ՝ կաշառք ստանալը, կաշառք տալը և այլն: Գործող Օրենսգրքում տեղ գտած մոտեցումն առավել արդարացված է

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-88-Ն Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումը (հասանելի է http://www.parliament.am/draft_docs/7/K-288_himnavorum.pdf հղումով 16.10.2024թ. դրությամբ):

թվում, քանի որ ՀՀ-ի կողմից նոր միջազգային պարտավորությունների ստանձնման պարագայում կարիք չի լինի քրեական օրենսգրքում անընդհատ փոփոխություններ կատարել⁶:

Գողական աշխարհի ներկայացուցիչների, այդ թվում նաև՝ «օրենքով գողերի» որոշ մասը գտնվում է տարբեր երկրներում⁷, որտեղից էլ կարող են իրականացնել իրենց «գործառույթները»: Այլ կերպ՝ անձինք գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները կարող են կատարել՝ գտնվելով նաև ՀՀ-ի սահմաններից դուրս, այդ թվում նաև՝ այնպիսի երկրներում, որտեղ այդպիսի արարքները քրեականացված չեն:

Հատկանշական է, որ «օրենքով գողերի» կողմից իրականացվող հսկողության առավել նկատելի առանձնահատկություններից է նրանց հեղինակությունը հանցավոր շրջանակներում՝ հիմնված համբավի վրա: Այսպիսով՝ ֆիզիկական ներկայությունն ընդհանրապես որոշիչ գործոն չէ այս հանցավոր ղեկավարների իշխանության և հեղինակության համար: Ընդհակառակը, հաղորդակցության լավ զարգացած ցանցը և հասարակության կողմից հանցավոր ղեկավարների դրական ընկալումն ապահովում են նրանց ազդեցությունը հանցավոր աշխարհում⁸:

Նման պայմաններում հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիներին, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը հնարավոր է լուծել գործող Օրենսգրքով՝ անկախ այդ արարքները կատարելու վայրի պետության տարածքում դրանք հանցանք համարվելուց:

⁶ Տե՛ս **Գաբուլյան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ.**, ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 39, (հասանելի է <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

⁷ Տե՛ս **Малинин В.Б.** "Воры в законе" за рубежом: история проникновения, American Scientific Journal, 2017, № 15, էջեր 65-67, (հասանելի է <https://www.elibrary.ru/item.asp?id=32357014> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 23-րդ կետը, գանգատ թիվ 45554/08, (հասանելի է <https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Այլ կերպ՝ արդյո՞ք առկա է Հայաստանի Հանրապետության որևէ միջազգային պայմանագիր, որը հնարավորություն կտար գողական աշխարհին առնչվող անձանց, գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ՀՀ-ում ենթարկել քրեական պատասխանատվության՝ քննարկվող հանցանքները ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում:

Այսպես, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան⁹, «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը¹⁰, «Հանցավորության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը¹¹, ինչպես նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիան¹², «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիան¹³, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին»

⁹ Տե՛ս «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, ընդունվել է 2000 թվականի նոյեմբերի 15-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2003 թվականի սեպտեմբերի 29-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

¹⁰ Տե՛ս «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր, ընդունվել է 1998 թվականի հոկտեմբերի 2-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 2-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

¹¹ Տե՛ս «Հանցավորության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիր, ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 25-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2001 թվականի ապրիլի 19-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11):

¹² Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիա, ընդունվել է 1993 թվականի հունվարի 22-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1994 թվականի դեկտեմբերի 21-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11):

¹³ Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիա, ընդունվել է 2002 թվականի հոկտեմբերի 7-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 19-ին, (հասանելի է <https://www.arlis.am/> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Եվրոպական կոնվենցիան¹⁴, չեն նախատեսում այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն կտային գողական աշխարհին առնչվող անձանց, գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ՀՀ-ում ենթարկել քրեական պատասխանատվության՝ քննարկվող հանցանքները ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում:

Ստացվում է, որ գողական աշխարհի ներկայացուցիչները կարող են իրականացնել իրենց «գործառույթներն» օտարերկրյա այնպիսի պետություններից, որտեղ գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները քրեականացված չեն՝ վստահ լինելով, որ ՀՀ-ում հայտնվելու դեպքում չեն ենթարկվի քրեական պատասխանատվության:

Այդպիսի խնդրահարույց իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ բացակայեն անձին ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկելու՝ գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանները¹⁵: Օրինակ՝ ՀՀ քաղաքացի «օրենքով գողն» այնպիսի պետությունում, որտեղ գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները քրեականացված չեն, իր «գործառույթներն» իրականացնի՝ կատարելով արարք, որն ուղղված չէ ՀՀ շահերի, ՀՀ քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ:

Նման պայմաններում, կարծում ենք, որ գողական աշխարհի ղեկավարները քրեական պատասխանատվության ենթարկվելուց խուսափելու նպատակով կտեղափոխվեն այդպիսի երկրներ՝ այնտեղից հեռավար կարգով շարունակելով ղեկավարել գողական աշխարհը, և անհրաժեշտության դեպքում ՀՀ վերադառնալու

¹⁴ Տե՛ս «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Եվրոպական կոնվենցիան, ընդունվել է 1959 թվականի ապրիլի 20-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 25-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

¹⁵ Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ:

պայմաններում ապահովագրված կլինեն քրեական պատասխանատվության ենթարկվելուց:

Նման իրավիճակը, կարծում ենք, էական վնաս կհասցնի քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետությանը, քանի որ կխոչընդոտի գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչներին քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Այս իրավիճակի հաղթահարման առաջին տարբերակը համապատասխան միջազգային պայմանագրի կնքումն է, որը թույլ կտա գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիներին, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության ենթարկել գործող Օրենսգրքով՝ անկախ այդ արարքները կատարելու վայրի պետության տարածքում դրանք հանցանք համարվելուց:

Նման տարբերակի թերությունը, սակայն, այն է, որ միջազգային պայմանագրի կնքման և վավերացման համար անհրաժեշտ է համաձայնության գալ այլ պետությունների հետ, որը կարող է և տեղի չունենալ: Բացի այդ, միջազգային պայմանագրերի կնքման և վավերացման գործընթացը, որպես կանոն, բավականին ժամանակատար է:

Երկրորդ տարբերակը գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում լրացում կատարելն է՝ ի լրումն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի՝ թվարկվելով գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը: Այդ դեպքում քննարկվող իրավանորմի գործողությունը կտարածվի ոչ միայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի, այլ նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի վրա՝ նպաստելով գողական աշխարհին առնչվող անձանց, հատկապես՝ դրա ղեկավար կազմի դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետությունը բարձրացնելուն:

Համանման մոտեցում է դրսևորված նաև Վրաստանի քրեական օրենսգրքում¹⁶, որի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Վրաստանի քաղաքացիները և Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ունեցողները, որոնք արտասահմանում կատարել են արարքներ, նախատեսված, ի թիվս այլնի, Վրաստանի քրեական օրենսգրքի 223¹-223⁴-րդ հոդվածներով (քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր), որոնք չեն ճանաչվում հանցագործություն այն երկրի օրենսդրությամբ, որտեղ դրանք կատարվել են, քրեական պատասխանատվության են ենթարկվում Վրաստանի քրեական օրենսգրքի համաձայն:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում լրացում կատարել՝ ի լրումն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի՝ թվարկվելով նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը:

Քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումներ նախատեսելու տեսանկյունից քննարկման անհրաժեշտություն ունի նաև գործող Օրենսգրքի ընդհանուր մասի ինստիտուտներից օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը:

Գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքներով պայմանավորված՝ բացառիկ դեպքերում, որոնք այն աստիճան են նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ դատարանի համոզմամբ սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը կամ ժամկետը խիստ է տվյալ անձի համար, ինչպես նաև խմբի կողմից կատարված հանցանքի մասնակցի կողմից այդ խմբի կատարած հանցագործությունը բացահայտելուն աջակցելու դեպքում դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ, կամ ժամկետ, կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով: Բացառիկ

¹⁶ Ст'а Уголовный кодекс Грузии (հասանելի է <https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

2. Համագործակցության վարույթ կիրառելու դեպքում ևս դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ, կամ ժամկետ, կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով»:

Վերոգրյալ իրավակարգավորման և քննարկվող ինստիտուտի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո¹⁷ հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք անհրաժեշտ է նախատեսել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում:

Այս հարցի քննարկման անհրաժեշտությունը պայմանավորված է ՌԴ քրեական օրենսգրքի¹⁸ 64-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ, որն արգելում է քննարկվող ինստիտուտի կիրառումը ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի (հանցավոր համագործակցություն (հանցավոր կազմակերպություն) կազմակերպելը կամ դրան մասնակցելը) 4-րդ մասով (արարքի կատարումը հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձի կողմից), 210.1-ին հոդվածով (հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնելը) նախատեսված հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձանց նկատմամբ:

Կարծում ենք, որ գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածում քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի կամ դրանց մի մասի առնչությամբ համանման արգելք նախատեսելն ընդունելի չէ:

Նման հետևությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը որևէ հանցանքի, այդ թվում նաև՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների համեմատությամբ հանրային վտանգավորության առավել բարձր

¹⁷ Տե՛ս **Գաբուզյան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ.** նշված աշխ., էջեր 151-153, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Հայկազ Հովհաննիսյանի գործով 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ ԼԴ2/0055/01/16 որոշման 11.1-ին կետը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402212 հղումով 16.10.2024թ. դրությամբ):

¹⁸ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации, (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ հղումով 16.10.2024թ. դրությամբ):

աստիճան ունեցող հանցանքների դեպքում չի նախատեսվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք:

Բացի այդ, հնարավոր չէ բացառել, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքներ կատարած անձանցից որևիցե մեկի դեպքում առկա կլինեն գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերից մեկը:

Նման արգելք նախատեսելը նաև որևէ կերպ չի կարող նպաստել քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը: Դեռ ավելին, նման արգելքը կարող է հանգեցնել հակառակ արդյունքի: Մասնավորապես, քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքներ կատարած անձանցից որոշները, տեղյակ լինելով իրենց նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման անհնարինության մասին և գիտակցելով, որ, անկախ իրենց համագործակցության բնույթից, քննարկվող ինստիտուտն իրենց նկատմամբ չի կիրառվի, կարող են այլևս չհամագործակցել իրավապահ մարմինների հետ: Նման դեպքերում վերջիններս այլևս շահագրգռված չեն աջակցել ոչ միայն իրենց կողմից կատարած հանցանքների բացահայտմանը, այլ նաև համագործակցության վարույթի շրջանակներում այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների բացահայտմանը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիության ապահովմանը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի¹⁹ 465-րդ հոդված):

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրակացնում ենք, որ գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածում բացակայում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք սահմանելու անհրաժեշտությունը՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում, ինչպես որ սահմանված է ՌԴ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով:

Գործող Օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, միասնական կայք 2021.07.26-2021.08.08 պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021:

գումարտակում պահելու կամ ազատագրկման ձևով պատիժ նշանակելիս հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով պատժից կարող է ազատվել նաև այն անձը, որի նկատմամբ սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ կիրառվել է համաձայնեցման, կամ համագործակցության, կամ արագացված վարույթ:

(...)

4. Պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) հանցանք կատարածի անձը,

4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել (...):»:

Վերոգրյալ իրավակարգավորման և քննարկվող ինստիտուտի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո²⁰ հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք անհրաժեշտ է նախատեսել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման արգելք քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում:

Քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք

²⁰ Տե՛ս **Օհանյան Լ.Պ.**, Պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի. առկա վիճակը, հիմնախնդիրները, կատարելագործման ուղիները, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի համար, Երևան, 2014, էջեր 15-17, 30-31, 74-78, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Վահե Սարգսյանի գործով 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԵԴ/0536/01/19 որոշման 18-18.1-ին կետերը, (հասանելի է <https://cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2251> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Նախատեսելու հարցի շրջանակներում վերը ներկայացրած մեր պատճառաբանությունները, կարծում ենք, կիրառելի են նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի դեպքում և վկայում են քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման արգելք նախատեսելու անհրաժեշտության բացակայության մասին: Հետևաբար, գործող Օրենսգրքի 84-րդ հոդվածում ՌԴ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասին նմանվող իրավակարգավորում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է, որն արգելում է քննարկվող ինստիտուտի կիրառումը ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ մասով, 210.1-ին հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ:

Կարծում ենք՝ գործող Օրենսգրքում բացակայում է նաև (ՌԴ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասում առկա իրավակարգավորման պես) հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական նշանակվող պատժի առավել բարձր՝ վերին շեմ նախատեսելու անհրաժեշտությունը, երբ անձը կատարել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք:

Այսպես, գործող Օրենսգրքի 74-76-րդ հոդվածները նախատեսում են հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական նշանակվող պատժի այնպիսի վերին շեմեր, որոնք հնարավորություն են տալիս ապահովել արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրացումը և պատժի նպատակներին հասնելը: Հետևաբար, գործող Օրենսգրքի 74-76-րդ հոդվածներում սահմանված ազատազրկման ձևով վերջնական նշանակվող պատժի վերին շեմերից որևէ շեղում նախատեսելու անհրաժեշտությունը քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում առկա չէ, իսկ նման տարբերակված մոտեցումը որևէ դրական ազդեցություն չի ունենա քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման գործում:

Գործող Օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

- 1) պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշաճ վարքագիծ, և
- 2) նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է»:

Ինչպես արդեն նշվել է, գործող Օրենսգրքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք՝ օրենսդիրը դիտարկում է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Քննարկվող հանգամանքը սահմանվել էր նաև նախկին Օրենսգրքով՝ 2017 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում²¹, որի հիմնավորման համաձայն՝ քրեական ենթամշակույթի հանդեպ դիրքորոշումը դինամիկ գործոններից է, որոնց վրա ազդելով՝ հնարավոր է նվազեցնել, չեզոքացնել նոր հանցագործությունների ռիսկը²²:

²¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49-Ն օրենքի 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-62-Ն օրենքի 1-ին հոդվածը, ընդունվել է 2017 թվականի մարտի 1-ին, ուժի մեջ է մտել 2017 թվականի հունիսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2017.03.29/19(1294) Հոդ.321:

²² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49-Ն օրենքի 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ հիմնավորումը, (հասանելի է

Այս նորմը, ըստ էության, հղում է պարունակում անձի՝ քրեական ենթամշակույթի վերաբերյալ ունեցած սեփական դրական կամ բացասական ընկալմանը կամ, այլ կերպ ասած, հանդիսանում է անձի սուբյեկտիվ ու գնահատողական վերաբերմունքն այդ երևույթի նկատմամբ: Այսինքն՝ քրեական ենթամշակույթի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքով անհրաժեշտ է գնահատել նրա կողմից նոր հանցագործություն կատարելու ռիսկը²³:

Նման պայմաններում, հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք անհրաժեշտ է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք դիտարկել քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Վերը մեջ բերված տեսակետների և քննարկվող ինստիտուտի առնչությամբ արտահայտված իրավական այլ դիրքորոշումների լույսի ներքո²⁴ կարծում ենք, որ օրենսդիրն իրավացիորեն քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը կարևորել է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս:

Այսպես, քրեական ենթամշակույթի նկատմամբ դրական վերաբերմունք ունենալը, այդ ենթամշակույթի գաղափարախոսությունն ընդունելը բարձրացնում է դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը և չի կարող անտեսվել դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս: Եվ ընդհակառակը, քրեական ենթամշակույթի նկատմամբ բացասական վերաբերմունք ունենալը, այդ ենթամշակույթի գաղափարախոսությունը չընդունելը նվազեցնում է դատապարտյալի նոր հանցանք կատարելու

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8561&Reading=0>

հղումով 16.10.2024թ.

դրությամբ):

²³ Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշումը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622 հղումով 16.10.2024թ. դրությամբ):

²⁴ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.Հ.** Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման համար, Երևան, 2013, էջեր 62-63, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Արմեն Արմենյանի գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՇԴ/0014/12/17 որոշման 14-14.1-ին կետերը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402251 հղումով 16.10.2024թ. դրությամբ):

հավանականությունը և այլ հանգամանքների հետ համակցության մեջ կարող է վկայել ապագայում դատապարտյալի իրավահպատակ վարքագիծ դրսևորելու, առանց պատժի մնացած մասը կրելու վերասոցիալականացումը հնարավոր լինելու մասին:

Այս առումով հատկանշական է, որ դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս գործող Օրենսգիրքը չի սահմանափակվել միայն գողական աշխարհին անդամակցելու հանգամանքով (ինչը, ինքնին, արդեն հանցանք է), այլ կիրառվել է ավելի լայն եզրույթ, որը հնարավորություն է տալիս նոր հանցանք կատարելու բարձր հավանականություն ունեցող դատապարտյալ դիտարկել նաև գողական աշխարհին չանդամակցող, սակայն քրեական ենթամշակույթի գաղափարախոսության ազդեցության տակ գտնվող և դրա նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող անձանց: Նման մոտեցումն արդարացված է, քանի որ այդ հանգամանքը, այլ հանգամանքների հետ համակցության մեջ, օբյեկտիվորեն հիմք է ենթադրելու, որ դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը բարձր է:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք՝ օրենսդիրն իրավացիորեն դիտարկել է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Քննարկվող ինստիտուտի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է նախատեսել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու արգելք՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում:

Կարծում ենք, որ նման մոտեցումն ընդունելի չէ, առաջին հերթին, այն պատճառով, որ օրենսդիրը որևէ հանցակազմի, այդ թվում նաև քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի համեմատությամբ հանրային վտանգավորության առավել բարձր աստիճան ունեցող հանցակազմերի դեպքում չի նախատեսել նման արգելք: Այս առումով հատկանշական է «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի

թիվ Rec(2003)22 հանձնարարականի²⁵ 4ա կետը, ըստ որի՝ ազատագրկման բացասական հետևանքները նվազեցնելու և արտաքին աշխարհի անվտանգությունը երաշխավորող որոշակի պայմանների կիրառմամբ ազատությունից զրկված անձանց սոցիալական վերականգնումը խթանելու նպատակով օրենքը պետք է պայմանական ազատումն ապահովի ազատագրկման դատապարտված բոլոր անձանց, այդ թվում՝ ցմահ ազատագրկման դատապարտվածների համար:

Բացի այդ, նման մոտեցման պարագայում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք կատարելու համար դատապարտված անձի վերասոցիալականացումը հնարավոր լինի առանց պատժի մնացած մասը կրելու, սակայն վերջինս հնարավորություն չունենա պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել միայն այն պատճառով, որ կատարել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք:

Հետևաբար, ընդունելի է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու արգելք չնախատեսելու օրենսդրի մոտեցումը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևության, որ գործող Օրենսգրքի ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում առկա է քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, իսկ մյուսներում այդպիսի իրավակարգավորումների բացակայությունը որևէ կերպ չի խոչընդոտում քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելուն:

²⁵ Տե՛ս «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականն անդամ երկրներին, ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 24-ին, (հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ ЗАКРЕПЛЕНИЯ ПРАВОВЫХ НОРМ, КАСАЮЩИХСЯ КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРЫ, В ОБЩЕЙ ЧАСТИ УГОЛОВНОГО КОДЕКСА

Бабаханян Арман

Преподаватель кафедры уголовного права ЕГУ,

Помощник Судьи Уголовной палаты Кассационного суда РА

Аннотация. В данной статье рассмотрены некоторые вопросы закрепления правовых норм, касающихся криминальной субкультуры, в Общей части Уголовного кодекса Республики Армения. В результате исследования, также с учетом опыта некоторых зарубежных стран, автор пришел к выводу, что в одних институтах Общей части УК РА существует необходимость закрепления специальных правовых норм, касающихся криминальной субкультуры, а в других отсутствие такого правового регулирования никоим образом не мешает эффективной уголовно-правовой борьбе с криминальной субкультурой.

Ключевые слова: криминальная субкультура, воровской мир, вор в законе, представители воровского мира, общая часть уголовного кодекса.

SOME KEY ISSUES IN THE CONSOLIDATION OF LEGAL PROVISIONS ON CRIMINAL SUBCULTURE IN THE GENERAL PART OF THE CRIMINAL CODE

Babakhanyan Arman

Lecturer at Chair of Criminal Law of YSU,

Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court

Summary: This article addresses certain issues regarding the establishment of legal norms related to criminal subculture in the General Part of the Criminal Code of the Republic of Armenia. Based on the research, and taking into account the experience of some foreign countries, the author concludes that in some institutions of the General Part of the Criminal Code of the Republic of Armenia, there is a need to define special legal norms related to criminal subculture, while in others, the absence of such legal regulation does not hinder effective criminal law enforcement against the criminal subculture.

Key words: criminal subculture, thieves' world, thief in law, representatives of the thieves' world, General Part of the Criminal Code.

Հոդվածը գրախոսվել է՝ 22.10.2024թ.
Ներկայացվել է քննադրության՝ 11.10.2024թ..